ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ապրիլ 2019 թվականի թիվ 43 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 107-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցության փոխհատուցման ենթակա ծավալների, փոխհատուցման կարգի և փոխհատուցում ստացող սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 21-ի թիվ 271-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1444-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 107-Ն որոշումները և ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչի զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 107-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված 666771.7 հազար դրամ գումարից 62673.1 հազար դրամը փոխանցել սահմանամերձ համայնքների հողի հարկի և գույքահարկի գանձապետական հաշվեհամարին՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա. Գևորգյանին՝ ապահովել որոշման կատարումը:

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

11.04.2019

հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի 2019 թվականի
ապրիլի 11-ի թիվ 43 - Ա որոշման

ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներին ցուցաբերվող պետական աջակցության գումարների
բաշխման վերաբերյալ ըստ եռամսյակային համամասնությունների

հազար դրամ

Հ/Հ	Համայնքի անվանումը	2019թ. հողի հարկ	2019թ. գույքահարկ	Ընդամենը աջակցության գումար	այդ թվում ըստ եռամսյակների					
					1-ին կիսամյակ			3-րդ եռամսյակ		
					հողի հարկ	գույքահարկ	Ընդամենը	հողի հարկ	գույքահարկ	Ընդամենը
1	Այգեհովիտ	4375.1	0.0	4375.1	2187.5	0.0	2187.5	2187.6	0.0	2187.6
2	Բերքաբեր	480.2	0.0	480.2	240.1	0.0	240.1	240.1	0.0	240.1
3	Ն.Ծաղկավան	1586.2	0.0	1586.2	793.1	0.0	793.1	793.1	0.0	793.1
4	Կիրանց	316.6	0.0	316.6	158.3	0.0	158.3	158.3	0.0	158.3
5	Սարիգյուղ	2254.6	0.0	2254.6	1127.3	0.0	1127.3	1127.3	0.0	1127.3
6	Սևքար	4547.5	0.0	4547.5	2273.7	0.0	2273.7	2273.8	0.0	2273.8
7	Վազաշեն	1033.6	0.0	1033.6	516.8	0.0	516.8	516.8	0.0	516.8
8	*Նոյեմբերյան համայնք այդ թվում*	*17010.3*	*0.0*	*17010.3*	*8505.2*	*0.0*	*8505.2*	*8505.1*	*0.0*	*8505.1*
	Նոյեմբերյան	4855.4	0.0	4855.4	2427.7	0.0	2427.7	2427.7	0.0	2427.7
	Բաղանիս	799.7	0.0	799.7	399.9	0.0	399.9	399.8	0.0	399.8
	Բարեկամավան	298.6	0.0	298.6	149.3	0.0	149.3	149.3	0.0	149.3
	Բերդավան	5506.0	0.0	5506.0	2753.0	0.0	2753.0	2753.0	0.0	2753.0
	Դովեղ	1081.0	0.0	1081.0	540.5	0.0	540.5	540.5	0.0	540.5
	Կոթի	3078.7	0.0	3078.7	1539.3	0.0	1539.3	1539.4	0.0	1539.4
	Ոսկեվան	1390.9	0.0	1390.9	695.5	0.0	695.5	695.4	0.0	695.4
9	Կողբ ընդամենը, այդ թվում	4312.8	255.5	4568.3	2156.4	127.8	2284.2	2156.4	127.7	2284.1
	- ֆիզիկական անձանց	4291.0	175.7	4466.7	2145.5	87.8	2233.3	2145.5	87.9	2233.4
	- իրավաբանական անձանց	21.8	79.8	101.6	10.9	39.9	50.8	10.9	39.9	50.8
10	*Բերդ համայնք այդ թվում*	*26500.7*	*0.0*	*26500.7*	*13250.4*	*0.0*	*13250.4*	*13250.3*	*0.0*	*13250.3*
	Այգեձոր	3896.6	0.0	3896.6	1948.3	0.0	1948.3	1948.3	0.0	1948.3
	Այգեպար	64.8	0.0	64.8	32.4	0.0	32.4	32.4	0.0	32.4
	Արծվաբերդ	5893.2	0.0	5893.2	2946.6	0.0	2946.6	2946.6	0.0	2946.6
	Մոսեսգեղ	3027.0	0.0	3027.0	1513.5	0.0	1513.5	1513.5	0.0	1513.5
	Ն.Կ.Աղբյուր	1272.0	0.0	1272.0	636.0	0.0	636.0	636.0	0.0	636.0
	Չինարի	1821.3	0.0	1821.3	910.7	0.0	910.7	910.6	0.0	910.6
	Չորաթան	1949.0	0.0	1949.0	974.5	0.0	974.5	974.5	0.0	974.5
	Պառավաքար	4058.4	0.0	4058.4	2029.2	0.0	2029.2	2029.2	0.0	2029.2
	Վ.Կ.Աղբյուր	4518.4	0.0	4518.4	2259.2	0.0	2259.2	2259.2	0.0	2259.2
ԸՆԴԱՄԵՆԸ		**62,417.6**	**255.5**	**62,673.1**	**31,208.8**	**127.7**	**31,336.5**	**31,208.8**	**127.8**	**31,336.6**

ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա Գևորգյան